ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՆԵՐԿԱՅԱՑՐԱԾ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ 2020-2022ԹԹ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ 2020Թ. ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2020-2022թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրի և 2020թ. բյուջեի նախագծերի (այսուհետ՝ Հայտերի) ուսումնասիրության և ս.թ. հունիսի 14-ին ՀՀ Էկոնոմիկայի նախարարությունում (այսուհետ՝ Նախարարություն) տեղի ունեցած հանրային քննարկումների արդյունքում Հայտերի վերաբերյալ ներկայացնում ենք հետևյալ դիտողություններն ու առաջարկությունները:

Ռազմավարական պլանավորում և ծրագրավորում

Նախարարության ներկայացրած Հայտերը չեն պարունակում 2019 թվականի փետրվարի 14-ի ԱԺՈ-002-Ն որոշմամբ հաստատված Կառավարության ծրագրով նախանշված առաջնահերթություններին վերաբերող ծրագրային լուծումներ:

Օրինակ, Նախարարության կողմից ներկայացված ՄԺԾԾ Հայտերում չկան գյուղ. կոոպերատիվների զարգացմանը միտված պետական աջակցության գործողություններ և չկան գյուղ.կոոպերացիայի զարգացմանը այլ նպատակային պետական օժանդակության ծրագրեր, բացի երկու սուբսիդիավորված վարկային պրոդուկտներում ընդամենը 2 տոկոսային կետով ավել սուբսիդավորելը, այն դեպքում երբ կոոպերացիայի զարգացումը հանդիսանում է բոլոր ռազմավարական փաստաթղթերի առաջնահերթություններից մեկը: Ստեղծված անբարենպաստ քաղաքականությունների պայմաններում նույնիսկ այդ վարկային պրոդուկտները գյուղ.կոոպերատիվների համար անհասանելի են, և 2017-2018 թթ. ընկած ժամանակահատվածում, ոչ մի գյուղ.սպառողական կոոպերատիվ չի ստացել նշված սուբսիդավորված վարկերից:

Հիշեցնենք նաև, որ այս հարցը հանրային քննարկման ժամանակ մեծ արձագանք ստացավ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.1: Ոլորտային բարեփոխումները պետք է սկսել քաղաքականությունների փոփոխությունից, որը բարենպաստ դաշտ կստեղծի գյուղ.կոոպերատիվների զարգացման համար ինչպես օրենսդրական,այնպես էլ հարկային դաշտում: Փաստացի այսօր փոքր գյուղ. սպառողական կոոպերատիվները գտնվումեն ավելի ծանր հարկային բեռի տակ քան ցանկացած առևտրային կազմակերպություններ, որոնց հիմնական նպատակն է շահույթի ստացումը և ոչ իր կոոպերատիվի անդամների սոցիալական և տնտեսական/կենսաապահովման պայմանների բարելավումը:

Գյուղ Դաշինքի կողմից մշակվել են հայեցակարգային փաստաթղթեր և առաջարկություններ, որոնք դեռ փետրվարին ներկայացվել են կառավարության և ԱԺ-ի դիտարկմանը չորս գյուղ.ոլորտներում՝ գյուղ.կոոպերատիվների, գյուղ.ապահովագրություն, գյուղ.վարկավորում և գյուղ.ներդրանքի քաղաքականությունների բարելավման նպատակով: Սակայն կառավարության կողմից ոչ մի առաջարկություն չի ընդունվել և ոչ մի բարեփոխում վերը նշված ոլորտների քաղաքականություններում չի իրականացվել:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 1.2. Կազմակերպել քննարկումներ վերը նշված թեմաների վերաբերյալ, հետագայուն դրանք Գյուղատնտեսության զարգացման 2020-2030 ռազմավարության մեջ մտցնելու նպատակով:

Միջոցառումներ և արդյունքային ցուցանիշներ

Գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորում (Ծրագիր 1022, միջոցառում 12002)

Նախորդ տարվանից տեղի են ունեցել սուբսիդավորվող վարկերի չափերի մեծացում, միջակայքը հաստատելով 3-15 մլն դրամ, որը առաջացրել է մտահոգություն փոքր ֆերմերների շրջանում, քանի որ նրանք դուրս են մնացել այդ ծրագրից: Նախարարության Գյուղատնտեսության պատասխանատուն պատասխանեց, որ մոնիտորինգի արդյունքները ցույց են տվել, որ այդ խոշոր վարկերի 93 % օգտագործվել են նպատակային, միևնույն ժամանակ չնշելով, արդյոք երբ ծրագիրը սուբսիդավորում էր մինչև 3 մլն դրամ վարկերը դրանց նպատակային օգտագործման չափը շատ ավելի փոքր էր:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.1. Առաջարկում ենք չսահմանել ներքևի շեմ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.2.Առաջարկում ենք բանկերի տոկոսների սուբսիդավորման պրակտիկայից, որը նպաստում է բանկային համակարգում լավ որակի վարկային պորտֆելի ձևավորմանը և ազդեցությունը գյուղատնտեսության վրա ավելի շատ երկրորդային բնույթ է կրում, մտածել գյուղմթերքի առաջնային արտադրողի գնի սուբսիդավորման ծրագրերի անցում կատարելու մասին:

Գյուղատնտեսությամբ զբաղվողներին ուղղակի աջակցության տրամադրում (Ծրագիր 1022, միջոցառում 12003) որի համար քննարկվող Հայտերում նախատեսվում է տարեկան շուրջ 1.99 մլրդ ՀՀ դրամ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.3. Ծրագրի շրջանակներում ավելացնել բացի ցորենից այլ մշակաբույսեր, և հաշվի առնելով Առաջարկություն 2.2 քանակապես ավելացնելու ծրագրի ծավալները : Պատասխանատուների կողմից որպես պատասխան հնչեց, որ այս տարի այդ ծրագրիը ամենայն հավանականությամբ չի իրականացվի:

Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով ագրովերամշակման ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսավճարների սուբսիդավորում (Ծրագիր 1022,միջոցառում 12004)

Գնահատվում է դրական, քանի որ գյուղացու վարկային բեռը չի ավելացնում, բայց արդյոք իրատեսական է որ տարեկան այդ ծրագիրը ծախսի նախատեսված 998 մլն դրամը, եթե 2018-ին ծախսվել է ընդամենը 160 մլն դրամից մի փոքր ավելին և առանձնապես ակտիվության աճ չկա:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 2.4 որոշակի գործողություններ նախատեսել փոքր վերամշակողներին և հատկապես կոոպերատիվների կարգավիճակ կամ կողմից ստեղծված վերամշակող կառույցներին ծրագրից օգտվելու հնարավորություններ ընձեռնելու ուղղությամբ:

Պատասխանատուն պարզաբանեց, որ բարձրացվել է վարկի առավելագույն չափը հասցնելով այն 1.5 մլրդ դրամի, ծրագրում ներգրավվել են նաև կաթ վերամշակողները, ինչպես նաև մտցվել է գյուղացիներին կանխավճար տրամադրելու մեխանիզմ, կարելի է համարել, որ 2019թ ծրագրի համար պիլոտային է, քանի որ տեղի են ունեցել ծրագրի դիզայնի էական փոփոխություններ իրենց թվում է, որ հնարավոր կլինի եթե ոչ 2019-ին , ապա հաջորդ տարիներին հասնել նպատակային թվերին:

Ֆինանսական գնահատականներ և ծախսային արդյունավետություն

Ապահովագրության պիլոտային ծրագրի ներդրման համար (Ծրագիր 1022, միջոցառում 12005)

500 մլն. ՀՀ դրամ հայտի վերաբերյալ ԳԴ ներկայացուցիչը նկատեց, որ ներկայացված հայտերից ապահովագրությունը միակ ուղղությունն է որ, հիմքում առկա չէ ծրագիրը, ուստի ոլորտի նախարարության պատասխանատուների հետ համաձայնություն ձեռք բերվեց քննարկել ու պիլոտային ծրագիրը հանրային լսումների կամ սկզբնական փուլում գոնե կլոր սեղանի շուրջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.1. Առաջարկում ենք ապահովագրական ծրագրերը վերաբերվեն և կապված լինեն ներկայացված մյուս ծրագրերի հետ, առավել ևս այն դեպքում, երբ ապահովագրությունը պարտադիր չի լինելու, ուստի այս գործիքը հնարավորություն կտա առաջարկվող ծրագրերով գոնե ապահովագրության պարտադիր պահանջ ունենալ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ 3.2. Առաջարկում ենք ապահովագրության ծրագրով նախատեսված միջոցներն ուղղել հատկապես անասնապահության զարգացման ծրագրին, ինչը հնարավորություն կտա ապահովագրել խոշոր եղջերավորներին, որոնք այդ դեպքում կհանդիսանան նաև գրավի առարկա վարկավորման համար և ֆերմերների դիմումները չեն մերժվի համարժեք և անհրաժեշտ գրավներ չունենալու պատճառաբանությամբ: